№ 3 Յունվարի 17 (29) 1880 Յունվարի 17 (29) № 3

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 ԹՎԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամմեան նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն։—Ներքին տեսութիւն։ Ս. Պետերբուրգի հայ ուսանողութիւնը և հայերէն ներկայացումն։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Պարսկաստանից։ —«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ի՞նչպէս է հանդիպել Եւրոպան նոր տարին, ներկայ 1880 թիւը։ Եւրոպական արևմտեան պետութիւնները, պէտք է խոստովանվել, բաւական խառն դրութեան մէջ են։

Արևմտեան Եւրոպայի պետութիւնների խառն և անորոշ քաղաքական դրութիւնը անցեալ 1879 թվին կարող էր համեմատվել միմիայն 1848 թվի հետ, այն զանազանութեամբ, որ 1848 թվին արևմտեան Եւրոպայի բոլոր երկիրների մէջ յանկարծ յայտնվեցաւ յեղափոխական սարսափելի շարժում, որ նոյն երկիրների ճանաչված, հանդարտ, պաշտօնական կեանքի հոսանքի դէմ էր գնում ու գործում, իսկ այժմ արևմտեան Եւրոպան պէտք է պատերազմի այն պրինցիպների գործադրութեան հետևանքների դէմ, որոնց իրանք տէրութիւնները ըստեղծեցին և որոնց քաղաքական զարգացմանը իրանք նպաստեցին։

Անգլիան ունի մի ներքին կռիւ Իրլանդիայում այդ երկրի հողային անարդար յարաբերութիւնների պատճառով։ Անգլիան սկսեց Աֆղանական պատերազմը և այժմ մեծ անաջողութիւններ է կրում այնտեղ, որտեղ նա կարծում էր թէ յաղթութիւնը շատ հեշտ է։

Ֆրանսիան հանդիպում է նոր տարին մինիստրական կրիզիսով։ Վադինգտոնի մինիստրութիւնը հրաժարական տուեց, ազգային ժողովի մէջ մեծամասնութեան համակրութիւնը կորցրած լինելուց յետոյ և այժմ կազմվել է Ֆրէյսինէի նոր մինիստրութիւնը որ միացնելով հանրապետական երկու խմբերի ներկայացուցիչներին, յոյս ունի որ այդպիսով կը կարողանայ կազմել միացնող կապ չափաւոր հանրապետականների և ամենաարմատական հանրապետականների մէջ և դրանով կը դրաւի ազգային ժողովի մեծամասնութեան համակրութիւնը։ Բայց այդ յոյսը դեռ ևս իրականութիւն չէ։

Աստրո-Ունգարիան դորանով է զբաղված, որ ապահովացնի տէրութեան համար, որչափ հնարաւոր է երկար ժամանակամիջոցով, պահպանել զօրքերը առանց ենթարկելու զօրքերին վերաբերեալ կարգադրութիւնները պարլամենտի որ և է վերահսկողութեան։ Աստրիական Բէյլհսրատը արդէն վաւերացրեց զինուորական նոր օրէնքը, որով զօրքի թիւը որոշվում է տասս տարով, թէ պատերազմական և թէ խաղաղ ժամանակների համար։

Գերմանիան զբաղված է նոյնպէս զինուորական օրէնքով և երևի կը հետևի այդ կողմից Աւստրո-Ունգարիայի օրինակին։ Զօրքերի թիւը որոշելուց յետոյ, տէրութիւնը կաշխատի պարլամենտի կօնտրոլից ազատ պահել զօրքերի վրա իր ստացած իշխանութիւնը, ինչպէս կարծում են եօթ տարով։ Բացի սորանից Գերմանիան այժմ հետզհետէ յետ է առնում ազգից գրեթէ այն բոլոր վերանորոգութիւնները, որոնք տուած էին ազգին իշխան Բիսմարկի պետական գործերի կառավարութեան օրով։ Տէրութիւնը կղերականների դէմ քաղաքկրթութեան կռիւը յայտնելուց և եռանդով շատ տարիներ վարելուց յետոյ, այժմ բարեկամանում է նոյն թշնամի կղերական կուսակցութեան հետ և հասարակական կարծիքը, շողոքորթելով տէրութեանը, այժմ պատերազմ է յայտնում հրէաների դէմ, որոնց ուրիշ քաղաքացիների հետ կատարեալ հաւասար իրաւունքներ էին տուած, երբ հրէաների արիւնի թափելն էլ հարկաւոր էր Ֆրանսիայի դէմ պատերազմի մէջ, այն հրէաների, որոնք այժմ նոյն գերմանական ազգին ատելի դարձան։

Իտալիայում Կայրոլիի վերանորոգված մինիստրութիւնը դարձեալ անզօր է թէ երկրի մէջ և թէ պարլամենտում համակրողների մեծամասնութիւնը իր կողմը գրաւելու։ Դորա հետևանքը այն է որ Իտալիան արտաքին քաղաքականութեան մէջն էլ անչափ թոյլ է և հազիւ թէ յոյս կարող է լինել որ նա առ այժմ մի որ և է դեր կարող է խաղալ եւրոպական ընդհանուր հարցերի վճռելու մէջ։

Սպանիայում անցեալ 1879 թվի վերջերում նշմարելի եղան մոքերի յուզմունքներ և անբաւականութիւններ ժողովրդի մէջ։ Ազգը դժգոհ է որ մինիստրութեան գլխաւոր կրկին դարձաւ Կանովաս-դել-Կաստիլիո, որ վաղուց է արդէն կատարելապէս կորցրեց իր ժողովրդականութիւնը։ Մի և նոյն ժամանակ տարվայ վերջում պատահեց Մադրիդի մէջ մի տխրալի անցք, այն է Ալֆոնսո թագաւորին և թագուհուն սպանելու յանցաւոր փորձը։

Վերջապէս Թիւրքիան հանդիպեց նոր տարին Սուլթանի ճառով, որ հարուստ է մեծ մեծ խոստումներով, բայց որոնք, ինչպէս միշտ երբէք իրագործվելու չեն թէ պետական մարդիկ, թէ ժողովրդական կրթութիւն չունեցող Թիւրքիայում։ Այդ պետութեան մէջ շարունակվում է ֆինանսների կատարեալ անկումն, մի քանի տեղերում արդէն սով է յայտնվել։ Անգլիան շարունակում է ճնշել Թիւրքիայի պետական գործերի վրա, ի հարկէ իր սեփական շահերը աչքի առջև ունելով։ Աւելի և աւելի կարելի է համոզվել որ Անգլիայի պահանջողութիւնները Փոքր-Ասիայի և Հայաստանի մէջ ռէֆորմների անյապաղ իրագործելու մասին, կեղծաւոր էին, որովհետև նրա բոլոր ջանքերը ուղղված են միմիայն մի կէտի վրա, այն է Թիւրքաց մինիստրութեան կազմակերպութեան փոփոխելու վրա, որպէս զի իրան համակրող մինիստրութեան օգնութեամբ կառավարի ամբողջ Թիւրքիան, ինչպէս իր մի նահանգ։

Այդ է, ահա, մի քանի գլխաւոր գծերի մէջ, արևմտեան Եւրոպայի ամենանշանաւոր պետութիւնների դրութիւնը։ Այդ տեսակ դրութիւնը առիթ չէ տալիս մեզ նախագուշակել եւրոպական ազգերին մի միխիթարական ապագայ, գոնէ ներկայ 1880 թվի ընթացքում, այն ազգերին, որոնք վաղուց է ծարաւ են հանգստութեան և խաղաղութեան և որոնք պարզ տեսնում են որ իրանց երկիրների քաղաքական այժմեան դրութիւնը դժուար թէ կը բաւականացնի իրանց այդ ամենակարևոր բարոյական պահանջին։

Այդպիսով ի նկատի առնելով մեր վերև յիշված բոլոր երկիրների տրամադրութիւնը, հազիւ թէ կարելի է ներկայ 1880 թվին շնորհաւորել արևմտեան Եւրոպային «բաղդաւոր նոր տարի։»

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ

—

Հանրածանօթ իրողութիւն է ուսանողների մեծ մասի թշուառ դրութիւնը: Հայ ուսանողութիւնը, ի հարկէ, բացառութիւն չէ կազմում: Նա դուցէ դեռ աւելի թշուառ վիճակի է ենթարկուած լինում իբրև պանդուխտ անազգական և անօգնական, խեղճութեամբ թափառելով փողոցից փողոց, անից տուն, մինչև կը գտնէր մի արժանագին, ազնաւողջ բնակարան և մի քանի չնչին դասեր: Չեմ յիշում ով է ասել այս խօսքը «մի ազգի զարգացման, ազնուութեան իրբև չափ կարող է համարուել մարդասիրական հաստատութիւնների թիւը», բայց եթէ այդ պարոնը հայերին ևս այդ չափով չափէր, նա նրանց պէտք է կէս—բարբարոսների դասին հաշուէր: Այդ դասի մէջ ես դնում եմ և մեր ինտելիգենցիան և ամենայն իրաւամբ: Եթէ ժողովուրդը դեռ մինչ այսօր չէ հասկացել հայ ուսանողներին օգնելու համար մի կասսա, ընկերութիւն սարքել, կամ դրա օգուտը նրա համար շօշափելի չէ, որի մասին ես նրան և չեմ մեղադրում, բայց հայ ինտելիգենցիան այսինքն այն մասը, որ եղել է առաջ ուսանող, նոյնպէս կրել է աշխատութեան ծանրութիւնը և ձաշակել է նրա բոլոր դառնութիւնները, բացարձակապէս մեղաւոր է: Մեղաւոր է նրա համար, որ ուսանողական կեանքից յետոյ մտնելով գործնական կեանքի մէջ, ստանալով փափուկ պաշտօն և ապահով տեղ, նա մոռանում է իսկոյն, որ իր կրտսեր եղբայրները դեռ շարունակում են թշուառութեան մէջ ապրել. հենց որ իր հասաւ այդ թշուառութիւնը դադարում է, նա ոլորովին օտանում է նրան ուրիշների համար. այդ բաւական չէ. քանի քանի անձինք մինչև անգամ մոռանում են իրենց բարոյական պարտքը, մոռանում են վերադարձնել այն չնչին գումարը, որ նրանք ստացել են ուսանողական կասսայից իրենց թշուառութեան օրերում: Ես գիտեմ մի քանի այդպիսիներ, որոնք այսօր հարուստ և փափուկ ապրում են, բայց իրենց պարտքը վերադարձնել չեն կամենում և երբ ուսանողութիւնը դիմում է նրանց յիշեցնելով իրենց բարոյական պարտաւորութիւնը, նրանք դեռ վերաւորվում են....: Այդ պարոնները վերին աստիճանի ազգասիրութիւն են համարում, երբ ձրիաբար մի դպրոցում մի քանի դասեր են տալիս, հոգաբարձութեան պաշտօն են կատարում և այլն, բայց կազմել մի մշտական ընկերութիւն, որ նպաստէր ուսանողներին,—ազգի այս ապագայ և միակ յոյսին և հայրենիքի փառքին—աւարտելու իրենց ուսումը, նա չէ մտածում անգամ, դուցէ դա բարձր ազգասիրութիւն չէ համարվում:— Հասկանալի է ուրեմն, որ ուսանողութիւնը, մնալով անօգնական և անպաշտպան, ստիպուած է ինքն իրեն օգնելու համար միջոցներ ձարել և միակ միջոցը, որ նա կարող է մտածել մայրաքաղաքներում, դա թատրոնական ներկայացումներն է: Այստեղ զարմանալի անձնազոհութիւն ենք տեսնում: Ուսանողը թողնում է իր պարապմունքը ամբողջ շաբաթներով. նա պէտք է օրը հազար անգամ այստեղ այնտեղ վազէ թոյլտուութիւն խնդրելու, տեղ ձարելու, հագուստ պատրաստելու, նա պէտք է ամեն տեսակ նուաստութեան ենթարկուի այս կամ այն հայ վաճառականին դիմելու և տոմսակ ծախելու համար երեսը սնդացնելու, խնդրելու, մինչև որ սա կը բարեհաճէր ընդունելու և մի երկու ռուբլի տալու: Շատ անգամ նա անյաղթելի խոչընդոտների է հանդիպում: օրինակ, չէ ձարվում հայ օրիորդ կամ կին, որ համոզուէր բեմ դուրս գալ, ուստի և ստիպուած է լինում ակամայ այնպիսի պիէսաներ ընտրել, որոնք շատ պատիւ չեն բերում նրա ճաշակին և չեն թողում հնազանդել Հօրացիոյի պատուիրանքին—հաձելին միացնել օգտակարի հետ.....

Սակայն այս կողմից Պետերբուրգի հայ ուսանողները աւելի երջանիկ են այսօր: Երբ առաջին անգամ ուսանողները Պետերբուրգում հայերէն ներկայացում կամեցան տալ, նրանք ստիպուած էին դիմել մի գերմանացու-հուրն թէև մի բառ հայերէն չը գիտէր, բայց այնքան կամեցաւ յարգել հայ ուսանողութիւնը, որ բոլոր իր դերը ռուսերէն բառերով գրելով անգիր սերտեց և մինչ անգամ շատ գեղեցիկ կերպով կատարեց: Երևի գերմանացուհու օրինակը ազդեց հայ օրիորդների վրա, ըստ որում այնուհետև նրանք սկսեցին բեմ դուրս գալ, և երբ այս ամռան 23-ին ես պատահմամբ իմանալով թէ հայ ներկայացում կայ դիմեցի շքեղարուեստակ-ն կրլուբը, որտեղ պիտի լինէր ներկայացումը իմ հայ զգացումս ոչ պակաս շողոքորթուած էր տեսնելով բեմի վրա երեք հայ օրիորդ և մի հայ տիկին: Բարոյական պարտաւորութիւն եմ համարում իմ և ուսանողութեան խորին շնորհակալութիւնը յայտնել հրապարակաբար տ. Աստուրեանին, օրիորդներ Էդիլխանեանին, Թամամշեանին, Մեղվինեանին, որոնք ոտնակոխ են անում հնաւանդ նախապաշարումները և չեն թողնում հայ երիտասարդ ուսանողին կարմրել օտարուհու առաջ: Այժմ դանք նոյն իսկ ներկայացման մասին մի քանի խօսք ասելու: Այս անգամ խաղում էին Սունդուկեանցի «Խաթաբալա» կոմէդիան: Դէկօրացիան հարուստ և շքեղ էր, սրահը լի էր և այդտեղ նարկայ էր ոչ թէ միայն մայրաքաղաքի հայ գաղթականութիւնը, այլ և վրացիք և ռուսները: Զամբախովի դերը պ. Բէկլարեան հիանալի կերպով կատարեց. նա բոլորովին ըմբռնել էր դերի նշանակութիւնը: Մասխեանի դերը (պ. Զարգարեան) թէև ունէր մի քանի պակասութիւններ, բայց այդ թերութիւնները վերաբերում են պիէսային և ճշմարիտ ամբողջ «Խաթաբալայի» մէջ միակ և մասամբ սխալ նկարագրած տիպը—Մասխեանն է, այդու ամենայնիւ պ. Զարգարեան հասկացել էր իր դերը: Քեթևանի դերը օրիորդ Թամամշեան այնքան բնական և գեղեցիկ կերպով կատարեց, որ աւելին ցանկալի անկարելի էր. դուք կը կարծէիք, որ գտանվում էք Թիֆլիսում, հայ ընտանիքի մէջ: Ինչ վերաբերում է Օ. Էդիլխանեանին (Նատալիայ) նրա միակ պակասութիւնը այն էր, որ շատ էր կոտրատվում, ինչպէս ասում են, բայց օրիորդի քաղցր, ներդաշնակ երգը բոլորի վրա հաձելի տպաւորութիւն գործեց: Պ. Մարկոսեանի (Սարգիս) երգը հիանալի և խիստ ազդու դուրս եկաւ: Ոչ պակաս գեղեցիկ խաղացին և տ. Աստուրեան, օր. Մեղվինեան, պ. Լալայեան: Երևում էր, որ ուսանողները և մեծ. օրիորդները բարեխղճաբար սովորել էին իրենց դերերը, ուստի և ներկայացումը ամբողջապէս շատ լաւ անցաւ և գեղեցիկ տպաւորութիւն գործեց: Ներկայացումից զոյացած զուտ արդիւնքը մօտ 300 ր. կը բաժանուի չքաւոր ուսանողներին: Պարահանդէսի ժամանակ, որ սկսեց ներկայացումից յետոյ մի առանձին խումբ ազգայիններ էր երգեր էր երգում: Ներկայացման մեծապէս նպաստել էին և կողմնակի մարդիկ, ինչպէս իշխան Բէհբուտեան, յայտնի Նէմիրովիչ Դանչէնկոն: Ժամը 4-ին մօտ 50 անձինք ընթրիքի նստեցին: «Тиф. Вѣстн.» լրագրի նախկին խմբագիրը շնորհակալութիւն յայտնելով հայ ուսանողութեան, հայ բեմի յարատևութեան և յառաջադիմութեան համար տօստ առաջարկեց: Նէմիրովիչ—Դանչէնկոն դարտակելով կենաց՝ վերկացաւ և ասաց. «մեզ շատ հաձելի է, որ մեր սրահում մի քանի հայ և վրացի ներկայացումներ եղան: Ես խորին կերպով գնահատում եմ արուեստը և մանաւանդ դրամատիկական արուեստը: Ինձ հաձելի է տեսնել, որ մի բուռն երիտասարդների զոհում են իրենց ժամանակը հայկական արուեստի վերածնելութեան համար, ուստի պարոններ, առաջարկում եմ խմել հայկական արուեստի վերածնելութեան համար:» Դրանից յետոյ առաջարկվեցաւ խմել իշխան Մաչաբէլի, իբրև վրացոց թատրոնական արուեստի ներկայացուցչի կենացը: Այս վերջինը պատասխանում է. «մինչ այսօր կային պատճառներ, որոնք տարաձայնութեան սերմեր էին ցանում երկու դրացի և մօտաւոր ազգերի մէջ. յուսանք որ մօտ ապագայում այդ երկու ազգերի մէջ կատարեալ համաձայնութիւն կը տիրէ:» Հանդէսը վերջացաւ հայ երգեցողութեամբ:

Հ. Առաքելեան

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

26 դեկտ. 79.

Առաջին նամակովս ես ծանօթացրի ընթերցողներին VI ժողովի հետ, այժմ կսկսեմ նկարագրել նրա գործունէութիւնը և այն հարցերը, որ այդ ժողովը մշակում է և որը մեզ համար կարող է հասարակական նշանակութիւն ունենալ:

Դեկտ. 20-ին տեղի ունեցաւ ռուս բնագէտների առաջին ընդհանուր ժողովը ճիշդ ժամը 1-ին: Առաւօտեան նշանակված էր ֆիզիկական դիտարանը այցելել, որտեղ ցոյց էին տալիս մթնոլորտական երևոյթների համար նոր ձեռք բերած գործիքներ: Ժամը 1-ին համալսարանի դլխաւոր սրահը ահագին բազմութեամբ լի էր: Ներկայ էին ոչ թէ միայն Պետերբուրգի անուանի ուսումնականները, այլ և մի քանի բարձր պաշտօնակատարներ, ինչպէս օրինակ Դելեանով և այլն: Սրահը ելեկտրական ճրագներով լուսաւորված էր: Նիստը բացեց Իշխան Վ. Օլկօնսկի, Պետերբուրգի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, հետևեալ խօսքերով: «Մեծ. պարոններ. Ռուս բնագէտների VI ժողովը գումարվում է համաձայն յունվարի 19-ին կայացած Բարձրագոյն թոյլտվութեան: Ներկայ ժողովի նպատակը բացատրված է կանոնադրութեան մէջ, ինչպէս կը տեսնէք: Անդամների ընդհանուր ժողովները իրենց առաջնորդ կոմենան նախագահին, որն այսօր պէտք է ընտրէք. իսկ ես այսօր ստացել եմ միայն ժողովի գիտական նիստերի բացման պատուաւոր պարտաւորութիւնը: Պատիւ ունեմ յայտնելու VI ժողովի բացումը և ցանկանալու ձեզ, պարոններ, ամենայն յաջողութիւն ձեր զբաղմունքի մէջ.»

Ես մոռացայ ասել, որ սրահի վերի ծայրում մի տեսակ ամֆիթէատրոն, բեմ էր շինված, որտեղ կենտրոնում դրած էր մի մեծ, երկար սեղան կարգադրիչ մասնաժողովի անդամների և նախագահի համար. նրա աջ կողմին դարձեալ մի մեծ սեղանի շուրջ բոլորվել էին լրագիրների թղթակիցները, որոնց թիւը հասնում էր 10-ի: Այդտեղ կարելի էր տեսնել «Голосъ» «Молва», «Новое Время», «Times» և «Մշակ» լրագիրների թղթակիցներին: Գուցէ առաջին անդամն էր, որ մի գիտական ժողովում ներկայ էր մի հայ լրագրի ներկայացուցիչը: Պէտք չէ ասել, որ պ. պ. թղթակիցներին ամենայն յարմարութիւն տուած էր հասնելու իրենց նպատակին և երբ իւրաքանչիւր ժողովի պրօտօկոլը տպվում է երկրորդ օրը ես ստանում եմ ժողովի վարչութիւնից 2 օրինակ «Մշակի» խմբագրութեանն ուղարկելու առաջարկութեամբ, որն և ուղարկում եմ նամակիս հետ:—Բայց դառնանք ընդհանուր ժողովին:

Իշխան Վ. Օլկօնսկու ճառից յետ, կարգադրիչ մասնաժողովի նախագահ, համալսարանի ռէկտոր Բէկէտով ողջունեց ժողովը հետևեալ խօսքերով:

«Այս անգամ ես բարձրանում եմ ամպիոն ողջունելու ձեզ իմ թանկագին ընկերակիցներիս ոչ թէ միայն ամբողջ մասնաժողովի այլ և համալսարանի կողմից, որ ուրախութեամբ իր դռները բացում է ձեր առաջ: 12 տարի առաջ ես ջերմ կերպով մասնակից էի I կազմակերպութեան, բայց այն ժամանակ ես այս ամպիոնից դիմում էի ձեզ, իբրև համալսարանի ռէկտոր իսկ մասնաժողովի նախագահ էր պատկառելի պրոֆէսսոր Կէսսլէրը, որին միայն մենք պարտաւոր ենք առ ռուս բնագէտների ժողով հիմնելու միտքը: Այս անգամ նա իր հիւանդութեան պատճառով չը կարողացաւ պաշտօնապէս մասնակցել մասնաժողովին, բայց նա մեզ օգնել է խօսքով և գործով: Եւ որովհետև մենք այսօր գումարվել ենք այստեղ միայն նրա գործունէութեան շնորհով, մենք պէտք է, իմ թանկագին ընկերներ, իբրև արդարադատ մարդիկ, յայտնենք մեր առաջին և ընդհանուր շնորհակալութիւնը մեր հռչակաւոր գիտնականին, առաջ բնագէտների ժողովի հիմնադիր պրոֆէսսոր Կէսսլէրին: Ցարգանք և փառք նրան: Միահամուռ ծափահարութեամբ ժողովը շնորհակալութիւն յայտնեց Կէսսլէրին:

Մասնաժողովի ատենադպիր պրոֆէսսոր Ինատրանցէվ կարդաց մասնաժողովի գործունէութեան մանրամասն հաշիւը և կանոնադրութիւնը: Այդ հաշուից երևաց, որ այժմեան ժողովը ամենաբազմամարդն էր և ամենահարուստը իր նիւթական միջոցներով: Մինչի ամսի 20-ը, անդամների թիւը հասել էր, 1,200 ի, դրանց թւում 500 ուրիշ քաղաքներից և 38 կին:—Ինձ շատ ծանր թուաց, որ այդ 1,200 անունների մէջ մի հայ ուսուցչի անուն չը լսեցի:—Ժողովի միջոցները կազմում են. ա) 3,000 ռուբլի, որ տուել է ազգային լուսաւորութեան նախարարը, բ) 1,000 ր. համալսարանը, գ) 2,000—քաղաքային դումա, դ) 3,600 ր. անդամակցական վճար, գումար 9,600 ռուբլի: Ահա կանոնադրութեան գլխաւոր կէտերը:

1) Նպատակ—ռուս բժիշկների և բնագէտների ժողովի նպատակն է արագացնել բնական գիտութիւնների ուսումնական և դպրոցական գործունէութիւնը և նպաստել նրանց կատարելագործութեանը և այդ գործունէութիւնը գլխաւորապէս ուղղել Ռուսաստանի օգտին և նրա հետազօտութեան, հայթայթել միջոց ռուս բնագէտներին միմեանց հետ ծանօթանալու:

2). Ժողովը գտանվում է լուսաւորութեան մինիստրի հովանաւորութեան ներքոյ, ուստի և անմիջապէս կախումն ունի ուսումնարանական շրջանի հոգաբարձուից:

3) Ժողովի անդամ կարող է լինել իւրաքանչիւր անձ, ով որ գիտնականապէս զբաղվում է բնագիտութեամբ, այսինքն իւրաքանչիւր ուսումնական, բայց ժողովի մէջ ձայն ունենալ կարող է միայն, ով որ կամ մի ինքնուրոյն գրուածք է տպել, կամ պրոֆէսսոր և ուսուցիչ է բարձր և միջնակարգ դպրոցներում:

4). Ժողովի նիստերը լինում են ընդհանուր և մասնաւոր (բաժանմունքով). ընդհանուր նիստերի մէջ ընդհանուր նշանակութիւն ունեցող խնդիրներ են քննադատվում, իսկ մասնաւոր նիստերում հաղորդվում ու քննվում են նոր հետազօտութիւններ և խնդիրներ, որոնք աւելի մասնագիտական նշանակութիւն ունեն:

5) Ժողովի բաժանմունքները կը լինեն. ա) անատոմիա և ֆիզիոլոգիա, բ) կենդանաբանութիւն և բաղդատական անատոմիա, գ) բուսաբանութիւն բոյսերի անատոմիա և ֆիզիոլոգիա, դ) հանքաբանութիւն, երկրաբանութիւն և պալէոնտոլոգիա, ե) քիմիա և ֆիզիկա, զ) աստղաբանութիւն և մաթեմատիկայ, է) անտրոպոլոգիա, ը) բժշկականութիւն:

Ներկայ ժողովի կարևոր յատկութիւնն այն է, որ շատ գիտնական և մասնաւոր ընկերութիւններ ու անձինք դիմել են նրան և առաջարկել մի քանի գործնական կարևոր հարցեր լուծելու, այդ ի հարկէ ցոյց է տալիս, որ ռուս հասարակութիւնը հասկանում է ժողովի հեղինակութիւնը և նրա գիտնական նշանակութիւնը: Մինչ այսօր 168 գիտնական յօդուածներ են մտել ժողովի բիւրօն, ի թիւս որոց դիֆտէրիտ հիւանդութեան մասին, որ պիտի քննուի յետագայ ժողովներից մէկում:

Պ. ատենադպրի հաշուից յետ ժողովը ձեռնարկեց նախագահի ընտրութեանը: Բէկէտով առաջարկեց քուէարկել, բայց ժողովը ի մի բերան աղաղակեց «Կէսսլէր, Կէսսլէր» պատկառելի գիտնականը բարձրացաւ ամպիոն և մի քանի ջերմ խօսքերով իր խորին շնորհակալութիւնը յայտնեց, բայց, ասաց, ստիպուած եմ հրաժարվել այդ պատուից երկու պատճառով. առաջին, որ հիւանդ եմ, երկրորդ որ ես չեմ մասնակցել ներկայ ժողովի աշխատանքին, ուստի և անարդարութիւն եմ համարում ուրիշի աշխատանքի պտուղը քաղել: Մի և նոյն ժամանակ Կէսսլէր բացատրեց ժողովի գիտական նշանակութիւնը և նրա օգուտները և իր կողմից առաջարկեց ընտրել նախագահ Բէկէտովին: Ժողովը խուռն ծափահարութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը, իսկ Կէսսլէրին այնու ամենայնիւ ընտրեց պատուաւոր նախագահ:

Բէկէտով ի պատասխանի իր ընտրութեան հետևեալ խօսքերն ասաց. «պարոննե՛ր, խորին շնորհակալութիւն, այն մեծ պատուի համար, որ ինձ արիք: Ես լաւ հասկանում եմ, որ ես արժանացայ այդ պատուին գլխաւորապէս նրա համար, որ դուք կամեցաք պատուել կարգադրիչ մասնաժողովը, որին ես նախագահ եմ և համալսարանը, որին ես ներկայացուցիչ եմ: Գուցէ և իմ ալևոր մազերս մասամբ պատճառ դարձան, որ ես այդ բարձր ուշադրութեանն արժանացայ ձեր կողմից. ինչ և իցէ ընդունեցէք իմ շնորհակալութիւնս

թէ մանաժողովի, թէ համալսարանի և թէ լամ կողմից։»

Այս բոլորից յետ ժողովը դիմեց իր զբաղմունքներին։ Կարդացուեցան հետևալ յօդուածները 1) պրոֆէսսոր Վագնէրի իմաստալից ճառը «գիտութեան նշանակութիւնը», որի բովանդակութեան հետ ես կը ծանօթացնեմ ընթերցողներին 2), նախագահ Բէկէտովի 2 առաջարկութիւնները ա) Բոլդարիան հետազօտելու համար մի էկսպէդիցիա կազմել, բ) բօտանիկական հաւաքածուներ կազմել, 3) պրոֆէսսոր Կէսսլերի երկու առաջարկութիւնները ա) Կրիմի բնապատմական հետազօտութեան համար մանաժողով նշանակել, բ) մի մշական մանաժողով նշանակել Ռուսաստանի ձրկների կեանքը և ձկնորսութիւնը քննելու։ Այս բոլոր առաջարկութիւնները ժողովը համակրութեամբ ընդունեց և յանձնեց համապատասխան բաժանմունքներին աւելի մշակելու համար։

Ժամը 3-ին նիստը փակվեցաւ։ Ժամը 5-ին «Դէմաւ» հիւրանոցում նշանակված էր ճաշ, որին ներկայ էին մօտ 500 հոգի։ Այդտեղ խմեցին Կայսեր, համալսարանի, բէկտորի և ուրիշ անուանի գիտնականների կենացը։

Հ. Առաքելեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են. «Այս տարի ձիւն չատ եկաւ և սաստիկ ցուրտ է։ Ուտելիքները թանգ են։ Թատրոնասէրների խումբը յունվարի 3-ին յօդուտ Սահականուշեան օրիորդական դպրոցի ներկայացրեց «Սէր և նախապաշարմունք» և «Պառաւներին խրատ»։

—

Խնդրում ենք մեր թղթակիցներին փողի հետ յօդուածներ կամ թղթակցութիւններ չուղարկել։ Յօդուածները պէտք է առանձին ծրարներով ուղարկել։ Խնդրում ենք նոյնպէս հատարակ նամակների հետ, փող չուղարկել։

—

Մեզ հաղորդում են ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ, որ այնտեղի երկու բաղանիքները չատ վատ են պահվում։ Ջուրը մի տեղ ամբարված է և այդ ջրի մէջ լողանում են բոլորը, թէ հիւանդները և թէ առողջները։ Նոյեմբերմս այդ ամբարված ջրի մէջ երկու երեխաներ էին ընկել, որոնցից մէկին ազատեցին, իսկ միւսը խեղդվեց։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ հաղորդում են, որ այդտեղ սաստիկ ցրտեր են սկսվել և մեծ քանակութեամբ ձիւն է եկել։ Քամին անցուդարձների աչքերը ձիւնով է լցնում։

—

Մեզ հաղորդում են ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ, որ թէ քաղաքում և թէ շրջականներում մեծ քանակութեամբ ձիւն է եկել։ Շրջակայ սարերի ճանապարհները փակվել են։ Մի քանի օր սրանից առաջ մի կին Հին-Նախիջևանից ուղևորվել է Շրխամանմուտ գիւղը։ Ճանապարհին կնոջը սպանել են և ջրհորն են գցել։ Այդ սպանութեան պատճառով կալանաւորված են սպանվածի 20 տարեկան հարազատ որդին և երիտասարդ դերձակ վարպետը։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Այստեղ թանգութիւնը դեռ ևս չարունակվում է։ Գինին, որ այս տարի այնքան առատ էր, որ ամաններ չէին գտնում մէջ ածելու, նոյպէս չատ թանգ է ծախվում։ Ամենահասարակ գինու թունդին 60 կ. արժէ։

—

Մեզ հաղորդում են ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ, որ նոյեմբերի 30-ին մի քանի թուրք ֆուրգոնչիներ Թիֆլիսում ապրանք են վերցրել Հին-Նախիջևան հասցնելու։ Վաճառականները իրանց ապրանքները լիովին չեն ստացել, իսկ ֆուրգոնչիներից մէկը բոլորովին տեղը չէ հասել։

—

ՍԱՆԱՀԻՆ գիւղից մեզ հաղորդում են, որ տեղական ուսումնարանը վերջին ժամանակները նոր ուսուցչի շնորհով բաւական բարեկարգվել է։

—

ԹԱՓԱՋԻԿ գիւղից յօդուտ «Արարատեան» ընկերութեան ստացանք 10 ռուբլի, որ հաւաքված է հետևեալ անձինքներից. Արզանդուլեանց, Մ. Քէօսեանց և Յ. Պողոսեանց։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 22 դեկտ. 79

Երեք ընկերութեանց միացման մասին հոս բոլոր բարեմիտ անձանց ճգունքը չեն պակեր։ Նորերս հրատարակվեցաւ տեղիս ամենաչատ տարածված թերթին մէջ, «թէրճէմանը էֆքեար» լրագրում մի հայերէն յօդուած այդ ընկերութեանց միացման մասին։ Յօդուածը, պիտի խոստովանեմ, խիստ է գրված և սարսափելի յարձակումներ ըրին յիշեալ յօդուածին դէմ։ Յաղթվուրդն այն յօդուածով բաւական գրգռված՝ օրէ օր միութեան գործը աւելի բարձր ձայնով կը պահանջէ։

Հռոմը իր վաղէմի քաղաքականութիւնն վերըսին ձեռք առնուլ սկսած է։ Նորա ցանկութիւնն էր Արևելքի բոլոր կաթոլիկներն, առանց խարութեան ազգի, միացնել մի մականի ներքև և այդ մականն այժմ տալիս է Հասունի, իր ամենակոյր ծառայի։ Հեռագիրը հաղորդեցին թէ Հասուն պապի կողմէն պիտի երթայ շնորհաւորելու Սուլթանին իսլամ նոր տարւոյ առթիւ, թէ հրաման ըստացեր է Հռոմէն կարգադրելու կղերական իրաւասութիւնն (droit ecclèsiastique) Արևելքի մէջ Բ. Դրան հետ, հաղորդեցին նաև, թէ Հասունը մօտ օրից գնալու է Հռոմ կարդինալի աստիճան ընդունելու։ Այս ամենն ներկայ նշան է թէ Հռոմը կամի Հասունի ձեռքին և նրա իշխանութեան տակ համախմբել արևելեան բոլոր կաթոլիկներին և ինքն Հասուն այլևս ինքն իրեն «պատրիարք հայոց» չանուանէր, այլ «կաթոլիկաց պատրիարք,» այսինքն՝ յոյն, արաբ, հայ, ղպտի, ասորի կաթոլիկաց պատրիարք։ Այդպիսով հայոց ազգութեան կաթոլիկ մասը կը կըլանվի կաթոլիկ ընդհանուր կղերական անդունդին մէջ։ Այդպէս կը գոյանայ «կաթոլիկ պետութիւն մը իսլամ պետութեան մը մէջ» (un état catholique dans un état musulman)։ Զարմանալին այն է որ այս անճոռնի քաղաքականութեան մեծապէս կը նպաստէ ազատամիտ, հանրապետական Ֆրանսիան, որ կը յուսայ, այդ միջոցով, իր ազդեցութիւն ապահովել Արևելքում, ուր գիտէ թէ Անգլիա կաշխատէ ուրիշ միջոցներով հային, արաբին, յոյնին սիրտը չտեղ։ Այս հարցը չատ չահեկան է սերտել և ես կը ցանկայի մի աւելի երկար աշխատութիւն նուիրել նրան։ Ես համակարծիք չեմ ձեզ թէ հայ կաթոլիկներ պիտի չը վերադառնան ի լուսաւորչական եկեղեցին։ Ես կը նկատեմ կըբօնը իբր քաղաքագէտ, որ կը պարտի հաշիւ առնուլ թիւրքաց և պարսից հայ ազգի ըստրուկ վիճակը, թէ երկրային դիրքը և թէ բարոյական կրթութիւնը։ Կրօնն ալ մի գործիք է յառաջադիմութեան, մի գործիք անկախութեան հասցնելու, մի գործիք ազգայնութիւնը պահպանելու, անշուշտ մինչև մէկ աստիճան։ Դեռ այդ աստիճանէն աստիի կողմն ենք և ոչ թէ անդիի։ Անոր համար ես ամենևին չեմ ցանկար որ կաթոլիկութիւն լինի ազգին մէջ, չեմ ցանկար որ բողոքականութիւն լինի։ Ազգային տեսակետէն, ազգի ամբողջութիւնն պահպանելու դիտաւորութեամբ ազգին ապագայ քաղաքական վիճակը ապահովելու մտքով, որքան և անմիտիթար լինէր՝ անկրօնութիւն անգամ նախամեծար կը համարեմ, քան ազգային եկեղեցիէն անջատումը, քան պաշտօնական կաթոլիկութիւն ու պաշտօնական բողոքականութիւն։ Այս դաւանութեանց մէջ, որքան ալ նոցանէ մին կամ միւսը առանձին վեր առած պատւական կարող են լինել, պաշտօնականն է, որ ինձ հաճելի չէ, վասն զի պաշտօնականը կարող է ազգին ընդհանրական շահերը վտանգել, թշնամի բանակներ յերևան հանել, ինչպիսի են այսօր կաթոլիկները, լուսաւորչականներն ու բողոքականներն, որք մէկ մէկու առն կը քանդեն, քանդելով և ընդհանուր ազգին տունը։

Կը տեսնեմ թէ նոր տարին ալ մօտ է, թէև այս գիր ձեզ պիտի հասնի երբ դուք արդէն թուականած կը լինիք յԱմանոր։ Ուստի իմ ամենանկեղծ բարեմաղթութիւնքս կընեմ վասն «Մշակի» բարգաւաճման։

***

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սպահան, 14 դեկտ. 79.

Յունիս ամսի 5-ին կատարվեցաւ մի հանդիսաւոր ընդունելութիւն մեր քաղաքում։ Թէհրանի ռուսաց դեսպանատան պաշտօնատար Իվան Ֆէոդորովիչ Պախիտանովը Կայսեր կողմից մի շքանշան պէտք է բերէր Սպահան տեղային կուսակալ արքայազն Զըլըլ սուլթանի համար։ Արդէն առաջուց Թէհրանի ռուսաց դեսպանը այնտեղի վիճակաւոր քահանայ տէր Գասպար Ցէր Սիմոնեանի միջնորդութեամբ խնացում տուած էր Սպահանի ս. Ամենափրկիչ վանքի առաջնորդական փոխանորդ Խաչատուր վարդապետին, որ իրանց պաշտօնատարը Սպահան հասնելու ժամանակ ընդունվի որպէս հիւր ս. Ամենափրկիչ վանքում։

Վանքում պատշաճաւոր պատրաստութիւնները տեսնելուց յետոյ, երբ մօտեցաւ դալստեան օրը, արժանապատիւ վանահայրը ուղարկեց ռուսաց պաշտօնատարի ընդառաջ մի քահանայ և քսանի չափ պատուաւոր անձինք, որոնք հանդիպեցան նրան քաղաքից երեք փարսախ հեռաւորութեանը Դեազ կոչված տեղում. և ընդունեցին նրան։ Նոյնպէս և վսեմափառ Արքայորդին ուղարկել էր իր կողմից ընդառաջ մի քանի պարսիկ իշխաններ, բազմաթիւ այրուձի և այլ մեծամեծ պատրաստութիւններ և մի փառաւոր կառք, որի մէջ նստած՝ նա պէտք է մուտք գործէր քաղաքը։

Երբ ռուսաց պաշտօնատարը մտաւ քաղաքը, ինքը արժանապատիւ վանահայրը եկեղեցական դասի հետ, դիմաւորեց նրան Զարբաղ կոչված արքայական ճեմելիքներում, և յարգանքով ընդունելով, բազմաթիւ հայ և պարսիկ աստիճանաւորների հետ, դիմեցին դէպի վանքը։ Նոյն ժամին վանքի զանգակները սկսեցին հնչել, և երբ մօտեցան դրանը, տեղային սովորութեան համեմատ, մի ոչխար զոհեցին պաշտօնատարի ոտքերի առջև։ Նա ուղղակի գնաց վանքի եկեղեցին, և աղօթելուց յետոյ, հրաւիրվեցաւ առաջնորդարանի մեծ դահլիճը, որը փառաւոր կերպով զարդարված էր։ Նոյն ժամում արքայազն Իշխանի կողմից եկան պարսիկ աստիճանաւորներ, բերելով իրանց հետ զանազան տեսակ քաղցրաւենիք, դրած արծաթեայ թանգագին մատուցարանների վրա, և շնորհաւորեցին ռուսաց պաշտօնատարի գալուստը։

Հետևեալ օրը ռուսաց պաշտօնատարը և արժ. հայր սուրբը, առնելով իրանց հետ Կայսրի ուղարկած շքանշանը, որ զարդարած էր բրիլիանտներով, կապտագոյն ժապաւէնի վրա, պատրաստվեցան տանել Արքայորդուն։ Իշխանի կողմից կանխապէս ուղարկված էին մի փառաւոր կառք և գեղեցիկ նժոյգներ, որոնց վրա նստելով սկսեցին դիմել Սպահանի հին թագաւորների հոյակապ պալատը, որ կոչվում է Սարփուչիգէ։ Կառքի առջևից գնում էին երկու կարգ զինուորներ, իսկ ետևից բազմաթիւ զօրք։ Պալատում բարձրաստիճան պարսիկ իշխաններ մեծ յարգանքով ընդունեցին ռուսաց պաշտօնատարին և հայոց հայր սուրբին, և ներկայացրին Արքայորդուն, որ այն օր ի պատիւ Կայսրի շքանշանին, հագնված էր ամենաչքեղ կերպով և շողշողում ու փայլում էր իր ոսկեհուռ, զոհարազարդ զգեստների մէջ։ Մատուցանելով շքանշանը Արքայորդուն, ռուսաց պաշտօնատարը իր համառօտ ճառի մէջ յայտնեց այն միտքը, թէ դա Կայսրի բարեկամական զգացմունքի արտայայտութեան մի նշանն է, որ ընծայում է Շահի վսեմափառորդուն, և թէ երկու պետութիւնների՝ ռուսաց և պարսից բարեկամական յարաբերութիւնները են և կը մնան միշտ հաստատուն, և վերջացրեց իր խօսքը բարեմաղթութիւններով Արքայորդու կենաց համար։ Այնուհետև մատուցին թէյ, զանազան տեսակ օշարակներ և քաղցրաւենիք, և բոլոր հանդիսականները գլուխ խոնարհեցնելով, շնորհաւորեցին Արքայորդուն։

Քանի օրից յետոյ Արքայորդին ընծայեց ռուսաց պաշտօնատարին մի գեղեցիկ արաբական նժոյգ, և հրաւիրելով Նրան ու արժ. հայր սուրբին իր պալատը, հիւրասիրութիւնից յետոյ, ինքը անձամբ տարաւ Նրանց իր հարուստ թանգարանը, և ցոյց տուեց բոլոր հազուագիւտ հնութիւնները, որոնք պարսից հին թագաւորների ժամանակներից սկսված, մեծ խնամքով պահված էին այնտեղ։ Յետոյ ընծայեց պաշտօնատարին իր լուսանկար պատկերը, որ դրած էր ոսկի շրջանակի մէջ զարդարած ալմաղներով և զանազան թանգագին ակներով։

Իսկ իր վերջին հրաժարական այցելութիւնը տալու ժամանակ ռուսաց պաշտօնատարը ստացաւ նորին վսեմափառութիւնից մի թանգագին բրիլիանտ մատանի, և նրա երկու ծառաները, որոնցից մէկը հայ էր, Յարութիւն անունով, իւրաքանչիւրը ստացան 200 թուման պարսից ոսկի։

Աւելացնում ենք և այն, որ քաղաքի մեծ իմամ-ջումայ պարսից դենպետը նոյնպէս իր կողմից պատուասիրեց ռուսաց պաշտօնատարին, և ուղարկելով մի քանի մատուցարանով քաղցրաւենիք, շնորհաւորեց նրա գալուստը, որի տեղ ընդունեց պաշտօնատարի փոխադարձ այցելութիւնը։

Ռուսաց պաշտօնատարի ամբողջ ներկայութեան ընթացքում, վանքի կառավարութիւնը միշտ պատրաստ ունէր բոլոր պիտոյքները, որ կը պատշաճէին նրա արժանաւոր հիւրերի ընդունելութեան համար։ Լինում էին ամեն օր փառաւոր ճաշեր և ընթրիքներ, բոլորը վանքի հաշուով։ Փոխադարձապէս հիւրասիրվեցան նաև քաղաքի քրիստոնեայ հասարակութեան նշանաւոր անձինքներից, որոնց մէջ ուշադրութեան արժանի են՝ պ. Ստեփաննոս Աղանուրեան հայազգի բրիտանական գործակատարը, պ. Խոջայ Իւսուֆ վաճառականապետը, միսար Դիոնիս անգլիացին, արքայորդու բժշկապետը, որը մի և նոյն ժամանակ Ջուղայի ղըպրոցների տեսուչ է, և պ. Մկրտիչ Յովհաննիսեան Ջուղայի ոստիկանութեան գլխաւորը (դարուղայ)։

Յունիսի 10-ին կիրակէ օրը, վանքի տաճարի մէջ պատարագ մատուցվեցաւ և կատարվեցաւ մաղթանք Կայսրի ազատութեան համար։ Պատարագին ներկայ էր ռուսաց պաշտօնատարը և քաղաքի հայ հասարակութիւնը։

Ցան և հինգ օր մնալով վանքում, ռուսաց պաշտօնատարը, որպէս հանդէսով ընդունված էր նոյնպէս պատուով ճանապարհ դրվեցաւ դէպի Թէհրան։ Արժ. հայր սուրբը և նա, նստելով Արքայորդուց յատկապէս ուղարկված կառքի մէջ, զինուորների և հեծելազօրների առաջնորդութեամբ դուրս եկան քաղաքից, և իջևանեցին մի գիւղում, ուր Արքայորդին փառաւոր ընթրիք էր պատրաստել տուել, և այնտեղից բաժանվեցան։

Վերջացնելով նամակս, հարկաւոր եմ համարում յիշել և այն, որ Թէհրանի ռուսաց վսեմ. դեսպանը իր երկու նամակների մէջ, որոց մէկը ուղարկած էր Արքայորդուն, իսկ միւսը Ջուղայի ս. Ամենափրկիչ վանքի առաջնորդական փոխանորդին,—յայտնել էր թէ իր և թէ իր տէրութեան համակրութիւնը դէպի Սպահանի հայ հասարակութիւնը։ Մի և նոյն միտքը յայտնել էր նա և Արքայորդու նամակի մէջ, խնդրելով, որ նա առանձին ուշադրութիւն դարձնէ հայերի վրա, որոնք ապրում են Սպահանում և չրջակայ գիւղերում։ Արքայորդին, որպէս ամբողջ Սպահանի նահանգի կուսակալը, պատասխանեց վսեմ. դեսպանին, թէ ամեն ջանք գործ կը դնէ, որ հայերի վիճակը հանգիստ և ապահով լինի, և իր շնորհը ու հովանաւորութիւնը անպակաս պիտի անէ այդ ազգից։ Իսկ արժ. խաչատուր հայր սուրբը իր գրութեան մէջ, որ առաքեց դեսպանին ռուսաց պաշտօնատարի ձեռքով, ծրագրեց 15 յօդուածներով այն բոլոր բարենորոգումները, որ անհրաժեշտ էին Սպահանի հայոց վիճակը բարւոքելու համար, և խնդրեց դեսպանի միջնորդութիւնը նրանց գործադրութեան մասին։ Յուսով ենք, որ դեսպանի շնորհիւ կատարումն կը ստանան։

Ռուսաց պաշտօնատարը մեկնեցաւ վանքից, ընծայելով 30 թուման հայոց աղքատաց արկղին և 10 թուման կուսանաց անապատին։

Ատենադպիր ս. Ամենափրկիչ վանքի Աւետիք Կ. Մ. Զոհրապեանց։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԿԱՆՆ, 11/23 յունվարի։ Կայսրուհին վատ չը քնեց, քունը ընդհատվում էր հաղով, քըրտինքը չափաւոր էր. օրուայ ընթացքում բաւականացուցիչ կերպով ճաշեց. ջերմութեան աստիճանը երեկոյեան 38 էր, իսկ երակի զարկը 108. առաւօտը ջերմութեան աստիճանը 37,8 էր, իսկ երակի զարկը 116։

ԼՕՆԴՕՆ, 11/23 յունվարի։ Թէհրանից հաղորդում են, որ Ռուսաստանը աֆղանական խանի հետ պայման է կապել, որպէս զի թոյլ տրվի նաւերին ռուսաց զօրքերով անցնել Ամուդարիայի վրայով։

Կ. ՊՕԼԻՍ, 13|24 յունվարի։ Հաւատացնում են, որ թիւրքաց և պարսից կառավարութիւնները բանագնացութիւններ են սկսել ստորագրելու մի դաշնադրութիւն, որի զօրութեամբ պէտք է ապահովացնել Պարսից ծոցը ծովային մի մեծ պետութեան խորամանկ դիտաւորութիւններից։ Այս գործը անմիջապէս քննվում է սուլթանի և պարսից դեսպանի մէջ, որը մի շաբաթվայ մէջ երեք անգամ գնաց սուլթանի պալատը։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է՝ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Յ. ՄԻԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ:

Կենտրոնական Գրավաճառանոցում Դվորցովոյ փողոցի վրայ, Արծրունու Գալլերէյում աճառվում են հետևեալ նոր գրքերը:

1. Կարմիր լապտեր, փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած.	գ. —	ր.	50 կ.
2. — նոյնը առանց կազմի.	—	»	30 կ.
3. Թաւամազ մեղու՝ փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի. պատկերազարդ և կազմած.	—	»	40 կ.
4. Եղբայր և քոյր մանկական վէպ. Թարգ. Զ. Մսերեանի պատկերազարդ	—	»	30 կ.
5. Հսկայական ձեռքեր. մանկական վէպ, Թարգ. Զ. Մսերեանի, պատկերազարդ	—	»	10 կ.
6. Փարոս Հայաստանի. պատկերազարդ հանդէս ընտանեկան ընթերցանութեան համար.	1	—	կ.
7. Թորոս աղբար Հայաստանի ճանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրուանձտեանց	1	25	կ.
8. Երկունք իններորդ դարու. գործ Ծերենցի.	1 »	—	կ.
9. Պատանեկան ներշնչումներ, գործ. Հրաչեա Աստուրի.	— »	60	կ.
10. Մի կաթիլ արտոսր, զոր կը հեղու Սիսակ հայ մոխիրին վրայ	— »	35	կ.
11. Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դատախօսութիւն Ս.Արծրունու.	— »	50	կ.
12. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բաբայեանի	1 »	—	կ.
13. Մարմնակազմական կամ անատոմիական բառարան Լատինէրենից և Ռուսերէնից Հայերէն. բժ. Լ. Տիգրանեանցի	1 »	—	կ.
14. Կրօնք. հոգեբանական հետազօտութիւն Ս. Մանդենեանի	1 »	—	կ.
15. Հայկական թատրոն. Վանքի իմ վիշտը, Ֆարս երեք պատկերով գործ. Մ. Տէր Գրիգորեանցի	— »	40	կ.
16. Բեքեր բիձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ, Թարգ. Ն. Լալայեանցի	— »	25	կ.
17. Աշնանային երեկոյ գիւղում, վոդեվիլ մէկ արարուածով, փոխադրութիւն Գ. Շահբուդաղեանի	— »	25	կ.
18. Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով, Թարգ. Գ. Զմշկեանի	— »	40	կ.
19. Ժանո և Ժանէտ օպերա-վոդեվիլ, Թարգ. Գ. Շահբուդաղեանցի մէկ գործողութեամբ	— »	40	կ.
20. Պէպօ. կոմեդիա երեք արարվածով, գործ. Գ. Սունդուկեանի	— »	30	կ.
21. Պառաւներին խրատ. վոդեվիլ մէկ արարվածով Մ. Տէր Գրիգորեանի	— »	50	կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուների, դասական պետական ուսումնարանների և աշակերտների համար, Հայերէն, Ռուսերէն և Գաղիերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և գիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարաքաղաքացիք իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետևեալ հասցէով „Въ Тифлисъ. Въ центральную книжную торговлю“

5—6

Մի ՖՐԱՆՍԻՈՒՀԻ տալիս է թէօրետիկական և պրակտիկական ԴԱՍԵՐ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻՑ: Հասցէն. Կուկիա, Բէուտովսկայա փողոց № 21:

1—4

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որ այս տարի ԱՒԱՐՏԵԼ է ՄՐՑԱՆԱԿՈՎ իգական ԳԻՄՆԱԶԻՈՆը, ցանկանում է ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒ պաշտօն ստանալ (գլխաւորապէս ռուսաց լեզուից և մաթեմատիկայից) մի ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ: Պայմանները խնդրում է ուղարկել ԱՅՍ ՀԱՍՑԷՈՎ՝ (С. Петербургъ. въ армянскую церковь, священнику Хонтардянцу).

Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԿՈՎԿԱՍ. ԳՐԱՎԱՃ. ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝

1) Մամուլի տակ ընկաւ և 1880 թ. յունվարին լոյս կը տեսնի՝ ՂՈՒԿԱՍԵԱՆՑԻ — ընդհանուր պատմութեան հին դարը — ա. մաս:

2) Շուտով մամուլի տակ կընկնի Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ աշխատասիրութեամբ և հրատարակութեամբ Մարդակազմութիւն՝ մարդուս մարմինը, նորա կեանքը և խնամատարութիւնը-անունով պատկերազարդ գիրը:

3) Մամուլի տակից դուրս է եկել և արդէն վաճառվում է «ԾԵՐԵՆՑԻ-Երկունք 9-դ դարու» պատմական վէպը, որոյ գինն ամէն տեղ մի բուբլի է:

Նոյն տեղը ստացուել է Բոստովի (պ. Տէր-ԱՒԱՄԵԱՆԻ) օրացոյցը, երկու պատկերներով զարդարուած. գինն է 15 կ.:

10—10

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

180 թ. Յունվարի 15-ից կ'հրատարակվի Էրէւանում շաբաթ մէկ անգամ

«ՊՍԱԿ»

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

«ՀՐԱՊԱՐԱԿ»

Տարեկան գինն է . . . 4 ռուբլի:
Կէս տարենը. . . . . 3 ռուբլի:

Յանկացողները կարող են ստորագրվել ուղղակի խմբագրատանը, Գէորգեան և ընկեր. տպարանումը: Կամ Աբգար Դուլամիրեանցի խանութումն: Խմբագրատունը բաց է առաւօտեան ժամի 10-ից մինչև ժամի 1-ն ճաշից յետոյ: Օտար քաղաքներից պէտք է դիմել ուղղակի խմբագրին հետևեալ հասցէով Въ г. Эривань Редактору газеты „ПСАКЪ“ **Васаку Пападжанову.**

Խմբագիր-Հրատարակիչ՝ Դր. Վ. Պապաջանեանց.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

բոլոր եւրոպական լրագիրների համար Մոսկվայում (Центральная контора объявленій для всѣхъ европейскихъ газетъ въ Москвѣ, Большая Дмитровка, д. Бучумова) ԸՆԴՈՒՆՈՒՄ է յայտարարութիւններ ԲՈԼՈՐ ռուս և արտասահմանեան ԼՐԱԳԻՐՆԵՐԻ համար խմբագրական ԳՆԵՐՈՎ, նշանաւոր ԶԻՋՈՒՄՆԵՐՈՎ:

Ռուսաց ամենօրեայ, շաբաթական, պատկերազարդ և ծաղրական լրագիրների ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ: ԱՄԵՆՕՐԵԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ունի բոլոր ռուսաց և արտասահմանեան ԼՐԱԳԻՐՆԵՐԻ հետ: Յայտարարութիւններ ընդունվում են նոյնպէս բոլոր գաւառական լրագիրների համար: Թարգմանութիւնները ԶՐԻ են լինում: Իւրաքանչիւր յայտարարութեան համար ԱՊԱՅՈՒՅԱԿԱՆ № է ուղարկվում:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՎԱՐՁ ԵՆ ԿԱԶՄՎՈՒՄ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ընդունվում է բոլոր լրագիրների համար:

15—15 (4)

ԾԱԽՎՈՒՄ Է

Նոր վրացական ձեռնարկ Самоучитель Учебникъ Грузинскаго языка, сост. г-мъ Теръ-Габріелянцемъ:

Այդ ձեռնարկը պարունակում է ընդհանուր տեղեկութիւններ ու քերականական կանոններ վրաց լեզուի ամենադիւրին ոճով. բառերի և տառերի արտասանութիւնը գրված է քանի մի լեզուով՝ ռուսերէն, հայերէն, ֆրանսերէն, գերմաներէն և պարսկերէն. այնպէս որ այդ միջոցով և օտարազգին ինչ իրան կարող է հեշտութեամբ ուսանել վրաց լեզուն:

Արդէն երկրորդ հրատարակութիւնն է և յուսամք երրորդ տպագրութեամբ՝ ի լոյս ածել կարճ միջոցից յետ: Գինն է 50 կոպ. ծախվում է պ. Բերենշտամի, Զաքար Գրիգորեանի, Աւետիք Էնֆիաձեանի մօտ ու Գաբրիէլ Սալամբէգեանի խանութում:

Մեր աշխատութիւնք են նոյնպէս. 1) Ֆրանսիական լեզուի ձեռնարկ, վրաց լեզուի օգնութեամբ. Livre de poche à lusage de la jeunesse armènienne et georgienne; 2) ինքնուսոյց ռուս լեզուի՝ վրաց լեզուի օգնութեամբ: Самоучитель Русскаго языка при помощи Грузинскаго.

Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեանց:

4—4

Ակադեմայում լաւ վկայականով ուսումը աւարտած մի երիտասարդ հաշուապահութեան և արևտրական թուաբանութեան դասեր է տալիս, նոյնպէս պատրաստում է երեխաներին ռէալական դպրոցներում աւանդվող բոլոր առարկաներից: պէտք է դիմել Զուբալովի քարվանսարան Գէորգեանի դրասենեակը:

1—3 (2)

ՄՈՒՇԵՂ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԸ ցաւօք սրտի խնդրում է իւր սիրելի ծխականներին, յարգելի բարեկամներին և ծանօթներին, որոնք կ'կամենան պատուել իրան շնորհ բերել իւր ամուսնոյ յուղարկաւորութեան հանդիսին, որը կատարուելու է ամսոյս 17-ին հինգշաբթի օրը առաւօտեան ժամը 10-ին: Հանգուցելոյ դիակը Մողնոյ թաղում գտնվող Քիշմիշեանի տանից կ'տարուի Մողնոյ Եկեղեցին և այնտեղից զկնի Սուրբ պատարագին դէպի Խօջէվանից գերեզմանատունը:

2—2

Հրատարակվեցաւ Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ «ՎԷՊԵՐ» վերնագրով գրքոյկը: Առնել կարելի է հեղինակից, դիմելով «Մշակի» խմբագրատունը:

2—5

«Մշակի» առանձին համարները 5 կոպէկով հատ ծախվում են ԹԻՖԼԻՍՈՒՄ հետևեալ տեղերում: «Կարդանախի» մագազինում (Արծրունու տանը, Դվորցովի փողոցի վրա, պ. Նազարբէգովի մօտ), «Կովկաս» հիւրանոցի տակ (պ. Դէմիրեանցի ծխախոտի խանութում), Զաքարիա Գրիգորեանի գրավաճառանոցում (Միխայլեան կարմուջի մօտ) և դերձակ Դեկարխանեանի մօտ, Բէալական դպրոցի դիմացը:

ԲԵՐԼԻՆԻ ակադեմիայի ԻՆԺԵՆԵՐ Կ. Կ. Կելլինգ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ է ամեն տեսակ ՊԼԱՆՆԵՐ և զանազան ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ է յանձն առնում: Հասցէն Վարանցովսկայա Նաբերեժնայա, № 4, ՎԵՐԻՆ ՅԱՐԿՈՒՄ:

1—5 (3)

Дозволено Цензурою 16 Января 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона